

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30–ի 2009/148/ԵՀ
հրահանգ**

**Աշխատավայրում ասբեստի ներգործությանն առնչվող ռիսկերից աշխատողներին
պաշտպանելու մասին**

(Ծածկագրված տարբերակ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 137(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [2],

Քանի որ

1) «Աշխատավայրում ասբեստի ներգործությանն առնչվող ռիսկերից աշխատողներին
պաշտպանելու մասին» Խորհրդի 1983 թվականի սեպտեմբերի 19–ի 83/477/ԵՏՀ հրահանգը
(80/1107/ԵՏՀ հրահանգի 8–րդ հոդվածի իմաստով երկրորդ առանձին հրահանգ) [3] մի
քանի անգամ էապես փոփոխվել է: Հստակության և բանականության նկատառումներից
ելնելով՝ նշված Հրահանգը պետք է կոդիֆիկացվի,

2) ասբեստն առանձնահատուկ վտանգավոր նյութ է, որը կարող է լուրջ հիվանդությունների
պատճառ լինել, և որը կարելի է գտնել աշխատանքային շատ պայմաններում: Հետևաբար,
շատ աշխատողների առողջությունը ենթարկվում է հավանական վտանգի: Երկնագույն
ասբեստը համարվում է ասբեստի առանձնահատուկ վտանգավոր տեսակ,

3) չնայած ներկայիս գիտական գիտելիքները հնարավորություն չեն տալիս սահմանելու մի
շեմ, որից ցածր առողջության համար վտանգը վերանում է, այնուամենայնիվ, ասբեստի

ներգործության կրճատումը կնվազեցնի ասբեստից առաջացող հիվանդությունների վտանգը: Հետևաբար, ասբեստից աշխատողներին պաշտպանելու համար անհրաժեշտ է նախատեսել հատուկ ներդաշնակեցված ընթացակարգեր: Սույն Հրահանգը ներառում է այն նվազագույն պահանջները, որոնք պետք է վերանայվեն՝ հիմնվելով այս ոլորտում ձեռք բերված փորձի և տեխնոլոգիական առաջընթացի վրա,

4) օպտիկական մանրադիտակով զննումը, չնայած դրանով հնարավոր չէ հաշվել առողջության համար որոշիչ նշանակություն ունեցող փոքրագույն մանրաթելերը, ասբեստի կանոնավոր չափման ներկայումս ամենաշատը օգտագործվող մեթոդն է,

5) առանցքային է ասբեստի ներգործությանը ենթարկվող աշխատողների առողջության պահպանմանն ուղղված կանխիչ միջոցների և նրանց առողջության նկատմամբ հսկողության մասով անդամ պետությունների համար նախատեսվող պարտավորության դերը,

6) մանրաթելերի սահմանումը հստակեցնելու համար դրանք անհրաժեշտ է սահմանել կամ հանքաբանական տեսանկյունից, կամ հղում կատարելով քիմիական նյութերի հակիրճ նկարագրության ծառայության իրենց համարին,

7) չհակասելով ասբեստի շուկայահանմանն ու օգտագործմանը վերաբերող Համայնքի մյուս դրույթներին՝ ասբեստի ներգործությանն առնչվող գործունեության սահմանափակումը պետք է շատ կարևոր լինի նմանատիպ ներգործությանն առնչվող հիվանդությունների կանխարգելման հարցում,

8) ասբեստի ներգործությանն առնչվող գործունեության վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համակարգը պետք է համապատասխանեցվի աշխատանքային նոր պայմաններին,

9) հեղուկացման միջոցով ասբեստի կիրառումն արգելելը բավարար չէ՝ ասբեստի մանրաթելերի արտանետումն օդ կանխելու համար: Կարևոր է նաև արգելել այն գործունեությունը, որի ընթացքում աշխատողները ենթարկվում են ասբեստի մանրաթելերի ներգործության՝ ասբեստի արդյունահանման կամ ասբեստ պարունակող արտադրանքի արտադրության և մշակման կամ կանխամտածված ավելացված ասբեստի մանրաթելեր պարունակող արտադրանքի արտադրության և մշակման ընթացքում՝ դրանց ներգործության բարձր և անկանխատեսելի մակարդակի առումով,

10) հաշվի առնելով տեխնիկական ամենավերջին փորձագիտական գիտելիքները՝ անհրաժեշտ է հստակեցնել օդում ասբեստի պարունակության մակարդակի չափման համար օգտագործվող նմուշառման մեթոդաբանությունը և մանրաթելերը հաշվելու մեթոդը:

11) չնայած դեռ հնարավոր չէ որոշել շփման այն շեմը, որից ցածր ասբեստն այլևս քաղցկեղի առաջացման վտանգ չի ներառում, աշխատանքի ընթացքում ասբեստի հետ աշխատողների շփումը պետք է նվազագույնի հասցվի,

12) գործատուներից պետք է պահանջել ասբեստի հեռացման ցանկացած նախագիծ սկսելուց առաջ գրանցել շենքերում կամ շինություններում ասբեստի առկայության կամ ենթադրվող առկայության մասին և փոխանցել այդ տեղեկությունները մյուսներին, ովքեր հնարավոր է, ենթարկվում են ասբեստի ներգործությանը դրա օգտագործման, ապամոնիտաժման աշխատանքների կամ շենքերում, կամ շենքերի վրա այլ գործունեություն իրականացնելու ընթացքում,

13) պետք է ապահովել, որ ապամոնիտաժման կամ ասբեստի հեռացման աշխատանքներն իրականացվեն այն ձեռնարկությունների կողմից, որոնք ծանոթ են աշխատողներին պաշտպանելու նպատակով ձեռնարկվող բոլոր նախազգուշական միջոցներին,

14) այն աշխատողները, ովքեր ենթարկվում են կամ կարող են ենթարկվել ասբեստի ներգործությանը, պետք է անցնեն հատուկ ուսուցում՝ նմանատիպ ներգործությանն առնչվող ռիսկերի նվազեցմանը զգալիորեն նպաստելու համար,

15) ասբեստի ներգործությանը ենթարկված աշխատողների նկատմամբ կլինիկական հսկողության մասին գործնական առաջարկությունները պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով բժշկության ոլորտում ամենավերջին փորձագիտական գիտելիքները՝ ասբեստին առնչվող ախտաբանական դեպքերը (պաթոլոգիաները) վաղ փուլում բացահայտելու նպատակով,

16) քանի որ առաջարկվող գործողության նպատակը, այն է՝ բարելավել աշխատողների պաշտպանությունը աշխատանքային պայմաններում ասբեստի հետ շփմանն առնչվող ռիսկերից, չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից և, հետևաբար, գործողության մասշտաբի կամ ազդեցության ուժով կարող է ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է, սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, միջոցներ սահմանել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված կարգով: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին

համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,

17) սույն Հրահանգում ներառված դրույթները հստակ նպաստում են ներքին շուկայի սոցիալական ուղղվածության հաստատմանը: Այս դրույթներով նախատեսվում են նվազագույն պահանջներ՝ փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման ու զարգացման համար անհարկի բեռ չստեղծելու նպատակով,

18) սույն Հրահանգը չպետք է հակասի II հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու և դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգի նպատակը աշխատողների առողջությունը աշխատավայրում ասբեստի ազդեցությունից առաջացող կամ առաջացման հավանականությամբ ռիսկերից պաշտպանելը, ինչպես նաև նման ռիսկերը կանխելն է :

Այն սահմանում է նման ներգործության սահմանային թույլատրելի նորմեր, ինչպես նաև այլ հատուկ պահանջներ:

2. Սույն Հրահանգը չի հակասում անդամ պետությունների կողմից աշխատողների պաշտպանությունն առավել ապահովելու համար օրենքներ, կանոնակարգեր կամ վարչական դրույթներ կիրառելու կամ ընդունելու իրավունքին, մասնավորապես, ասբեստն ավելի նվազ վտանգավոր նյութերով փոխարինելու առումով:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակներով «ասբեստ» նշանակում է հետևյալ թելավոր սիլիկատները՝

ա) ճառագայթաքար–ասբեստ CAS թիվ 77536-66-4 [5],

բ) ամոզիտ–ասբեստ, CAS թիվ 12172-73-5 [5]

գ) անթոֆիլիթ–ասբեստ, CAS թիվ 77536-67-5 [5],

դ) քրիզոտիլ, CAS թիվ 12001-29-5 [5],

ե) կրոկոդոլիտ, CAS թիվ 12001-28-4 [5],

զ) տրեմոլիթ-աաբեստ, CAS թիվ 77536-68-6 [5].

Հոդված 3

1. Սույն Հրահանգը կիրառվում է այնպիսի աշխատանքների նկատմամբ, որոնց դեպքում աշխատողներն իրենց աշխատանքի ընթացքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործության:

2. Ցանկացած այնպիսի գործունեության դեպքում, որը կարող է ներառել ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործության ենթարկվելու ռիսկ, տվյալ ռիսկը պետք է այնպես գնահատվի, որ որոշվի աշխատողների՝ ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործությանը ենթարկվելու բնույթն ու աստիճանը:

3. Եթե աշխատողի վրա ասբեստի ազդեցությունը հազվադեպ է և ցածր ինտենսիվության, և եթե 2-րդ պարբերությունում նշված ռիսկի գնահատման արդյունքներից պարզ երևում է, որ աշխատանքային տարածքում ասբեստի ազդեցությունը չի անցնի թույլատրելի սահմանը, 4-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածները կարող են չկիրառվել, եթե աշխատանքը ներառում է՝

ա) կարճ, ոչ կանոնավոր ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որոնց ընթացքում օգտագործվում են միայն ոչ փխրուն նյութեր,

բ) չտարրալուծված նյութերի ոչնչացում առանց քայքայման, որոնց մեջ ասբեստի մանրաթելերը հաստատապես կապված են միմյանց հետ մամլամայրում (matrix):

գ) օգտագործման համար պիտանի ասբեստ պարունակող նյութերի պատիճավորում կամ հերմետիկացում:

դ) օդում ասբեստի պարունակության դիտանցում և վերահսկում ու նմուշների հավաքում՝ կոնկրետ նյութի մեջ ասբեստի պարունակությունը պարզելու համար:

4. Անդամ պետությունները, խորհրդակցելով աշխատողների և գործատուների հետ, ազգային իրավունքի և գործելակերպի համաձայն, սահմանում են գործնական ուղենիշներ՝

3-րդ պարբերությամբ սահմանված կարգով հազվադեպ և ցածր ինտենսիվությամբ ասբեստի ազդեցությունը որոշելու համար:

5. 2-րդ պարբերությունում նշված գնահատման մասին ձեռնարկությունում կամ հիմնարկում պետք է խորհրդակցել աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ և այն պետք է վերանայվի, եթե պատճառ կա կարծելու, որ աշխատանքը ճիշտ չի կատարված կամ էական փոփոխություն կա աշխատանքում:

Հոդված 4

1. Համաձայն 3(3)-րդ հոդվածի՝ 2-5-րդ պարբերություններում նշված միջոցները պետք է ձեռնարկվեն:

2. 3(1) հոդվածում նշված աշխատանքները պետք է կարգավորվեն տեղեկությունների տրամադրման համակարգով, որը ղեկավարում է անդամ պետության պատասխանատու մարմինը:

3. 2-րդ պարբերությունում նշված ծանուցումը ներկայացվում է անդամ պետության պատասխանատու մարմին գործատուի կողմից, աշխատանքն սկսելուց առաջ՝ ազգային օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների համաձայն:

Ծանուցումը պետք է առնվազն կարճ բնութագիր ներառի՝

ա) աշխատանքների իրականացման վայրի, .

բ) օգտագործվող ասբեստի տեսակի և քանակության,

գ) ներառված աշխատանքների և ընթացակարգերի,

դ) ընդգրկված աշխատողների թվի, .

ե) աշխատանքը մեկնարկելու օրվա և տևողության, .

զ) աշխատողների վրա ասբեստի ազդեցությունը սահմանափակելու նպատակով ձեռնարկվող միջոցների վերաբերյալ:

4. Ազգային օրենքների համաձայն՝ ձեռնարկություններում կամ հիմնարկներում աշխատողները կամ նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն օգտվելու 2-րդ պարբերությունում նշված՝ ծանուցման առարկա հանդիսացող փաստաթղթերից, որոնք վերաբերում են իրենց իսկ ձեռնարկությանը կամ հիմնարկին:

5. Պետք է նոր ծանուցում ներկայացվի ամեն անգամ, երբ աշխատանքային պայմանների փոփոխությունը կարող է զգալիորեն ավելացնել ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործությունը:

Հոդված 5

Արգելվում է օգտագործել ասբեստը հեղուկացման և այնպիսի աշխատանքային ընթացակարգերում, որոնց ժամանակ օգտագործվում են ասբեստ պարունակող՝ ցածր խտությամբ (պակաս, քան 1գ./ սմ^{3-ը}) օժտված մեկուսիչ կամ ձայնամեկուսիչ նյութեր, :

Չհակասելով ասբեստի շուկայահանման և օգտագործման վերաբերյալ Համայնքի դրույթների կիրառմանը՝ այն աշխատանքները, որոնց ընթացքում աշխատողները ենթարկվում են ասբեստի մանրաթելերի ներգործության, առնչվում են ասբեստի արդյունահանման կամ ասբեստ պարունակող արտադրանքի արտադրության և մշակման կամ կանխամտածված ավելացված ասբեստ պարունակող արտադրանքների արտադրությանն ու մշակմանը, արգելվում են՝ բացառությամբ ապամոնտաժման կամ ասբեստի հանման հետևանքով առաջացող արտադրանքի վերամշակման ու հեռացման աշխատանքների:

Հոդված 6

3(1)հոդվածում նշված բոլոր աշխատանքների մասով, աշխատավայրում աշխատողների ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործության ենթակայությունը պետք է հասցվի նվազագույնի և ցանկացած դեպքում 8-րդ հոդվածում սահմանված թույլատրելի սահմանային արժեքից ցածր լինի, մասնավորապես, հետևյալ միջոցներով՝

ա) այն աշխատողների թիվը, ովքեր ենթարկվում են կամ կարող են ենթարկվել ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործության, պետք է հնարավորինս փոքր լինի.

բ) աշխատանքային գործընթացն այնպես պետք է կազմակերպվի, որ ասբեստի փոշի չարտադրվի, իսկ անհնարինության դեպքում՝ անհրաժեշտ է խուսափել ասբեստի փոշին օդ արտանետելուց.

զ) պետք է հնարավոր լինի կանոնավորապես և արդյունավետորեն մաքրել և պահպանել ասբեստի վերամշակման աշխատանքներում ներառված բոլոր շինություններն ու սարքավորումները.

դ) ասբեստը կամ փոշի առաջացնող ասբեստ պարունակող նյութերը պետք է պահվեն և փոխադրվեն կնքված ու հարմար փաթեթներով.

ե) թափոնները պետք է հնարավորինս շուտ հավաքվեն և հեռացվեն աշխատավայրից կնքված և հարմար փաթեթներով, որոնք պիտակներ են կրում՝ ցույց տալու համար, որ դրանք ասբեստ են պարունակում: Տվյալ միջոցը չի կիրառվում հանքարդյունաբերական աշխատանքների ընթացքում. նման աշխատանքների ընթացքում առաջացած թափոնների հեռացումը կարգավորվում է «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգով [6]:

Հոդված 7

1. Հաշվի առնելով ռիսկի նախնական գնահատման արդյունքները և նպատակ ունենալով պահպանելու 8-րդ հոդվածում սահմանված թույլատրելի արժեքը՝ աշխատավայրում կանոնավորապես իրականացվում է օդում ասբեստի մանրաթելերի քանակի չափում:

2. Նմուշառումը պետք է արտացոլի աշխատողի՝ ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործության աստիճանը մարդու վրա:

3. Նմուշառումն իրականացվում է ձեռնարկությունում կամ հիմնարկում աշխատողներին կամ իրենց ներկայացուցիչներին խորհրդատվություն անցկացնելուց հետո:

4. Նմուշառումն իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող աշխատակազմի կողմից: Ավելի ուշ ձեռք բերված փորձանմուշները, 6-րդ պարբերության համաձայն, հետազոտվում են այնպիսի լաբորատորիաներում, որոնք հազեցած են մանրաթելեր հաշվելու համար նախատեսված սարքավորումներով:

5. Նմուշառման տևողությունը պետք է այնպիսին լինի, որպեսզի դրա ընթացքում հնարավոր լինի որոշել ներգործության աստիճանը 8 ժամվա կտրվածքով (մեկ հերթափոխ)՝ չափումների կամ ժամանակը որոշող հաշվարկների միջոցով:

6. Մանրաթելերի հաշվարկ պետք է իրականացվի ցանկացած հնարավորության դեպքում ֆազակոնտրաստային մանրադիտակով՝ 1997 թվականին Առողջապահության

համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) [7] կողմից առաջարկված մեթոդի կամ ցանկացած այլ մեթոդի համաձայն, որը համարժեք արդյունքներ է տալիս:

Օդում ասբեստի քանակը չափելու նպատակով, ինչպես նշված է 1-ին պարբերությունում, հաշվի են առնվում միայն այն մանրաթելերը, որոնք ունեն 5 միկրոմետրից ավելի երկարություն, 3 միկրոմետրից պակաս լայնություն և որոնց երկարություն-լայնություն հարաբերությունը 3:1-ից մեծ է:

Հոդված 8

Գործատուները պետք է ապահովեն, որ աշխատողներից ոչ ոք չենթարկվի միջինը 8 ժամ ժամանակահատվածում 0,1 մանրաթել 1սմ³-ում չափման միջին ցուցանիշը գերազանցող՝ օդում ասբեստի խտացման ներգործության:

Հոդված 9

Սույն Հրահանգի 1-ին հավելվածը տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար անհրաժեշտ փոփոխություններն ընդունվում են «Աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովմանը և առողջության բարելավմանը նպաստելու համար միջոցներ ձեռնարկելու մասին»[8] Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Հոդված 10

1. 8-րդ հոդվածում սահմանված թույլատրելի սահմանային արժեքը գերազանցելու դեպքում այդ արժեքը գերազանցելու պատճառները պետք է բացահայտվեն և համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ հնարավորինս շուտ իրավիճակը շտկելու համար:

Աշխատանքը չի կարող շարունակվել ասբեստի ներգործության գոտում, քանի դեռ պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել՝ համապատասխան աշխատողներին պաշտպանելու համար:

2. 1-ին պարբերության առաջին ենթապարբերությունում նշված միջոցների արդյունավետությունն ստուգելու համար պետք է անմիջապես օդում ասբեստի խտացման հետազոտ չափում կատարվի:

3. Եթե այլ միջոցներով հնարավոր չէ նվազեցնել ասբեստի ներգործությունը և եթե թույլատրելի սահմանային արժեքին համապատասխանելու համար անհրաժեշտ է կրել շնչելու համար նախատեսված անհատական պաշտպանիչ սարքեր, ապա նման սարքերի օգտագործումը չի կարող մշտական բնույթ կրել և այն պետք է խստորեն համապատասխանի յուրաքանչյուր աշխատողի համար անհրաժեշտ կրելու նվազագույն չափին: Աշխատանքային այն ժամանակահատվածում, որի ընթացքում պահանջվում է կրել նմանատիպ սարքեր, անհրաժեշտ է նախատեսել ընդմիջումներ՝ ֆիզիկական կամ կլիմայական պայմաններին համապատասխան՝ հարկ եղած դեպքում, խորհրդակցելով ձեռնարկությունում կամ հիմնարկում աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ՝ ազգային օրենքներին և գործելակերպին համապատասխան:

Հոդված 11

Նախքան ապամոնիտաժման կամ վերանորոգման աշխատանքներն սկսելը՝ աշխատողները, հարկ եղած դեպքում, շինությունների սեփականատերերից տեղեկություն ստանալով, ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ պարզելու, թե որ նյութերն են ենթադրաբար ասբեստ պարունակում:

Եթե կասկած կա, որ նյութի մեջ կամ շինությունում առկա է ասբեստ, ապա կիրառվում են սույն Հրահանգում առկա դրույթները:

Հոդված 12

Որոշակի աշխատանքների դեպքում, ինչպիսիք են ապամոնիտաժումը, ասբեստի տեղափոխման աշխատանքը, հիմնական և ընթացիկ վերանորոգումը, որոնց առումով կանխատեսվում է, որ 8-րդ հոդվածում սահմանված թույլատրելի սահմանային արժեքը գերազանցվելու է՝ չնայած օդում ասբեստի խտացման քանակը սահմանափակելու համար տեխնիկական կանխիչ միջոցների կիրառմանը, գործատուն պետք է նախատեսի նման աշխատանքներում ընդգրկված լինելու ընթացքում աշխատողների պաշտպանության միջոցներ, մասնավորապես՝

ա) աշխատողներին պետք է տրվեն համապատասխան շնչառական կամ անհատական պաշտպանության այլ սարքեր, որոնք պարտադիր պետք է կրվեն,.

բ) նախագգուշական նշաններ պետք է դրվեն, որոնցով ցույց կտրվի, որ կանխատեսվում է 8-րդ հոդվածում սահմանված թույլատրելի սահմանային արժեքի գերազանցում, և

գ) պետք է կանխվի ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու տարածումը շինություններից կամ աշխատանքների իրականացման վայրից դուրս:

Այս միջոցների վերաբերյալ անհրաժեշտ է խորհրդակցել ձեռնարկության կամ հիմնարկի աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ՝ նմանատիպ աշխատանքներն սկսելուց առաջ:

Հոդված 13

1. Աշխատանքային նախագիծ պետք է մշակվի՝ նախքան ապամոնտաժման աշխատանքը կամ ասբեստ և (կամ) ասբեստ պարունակող արտադրանքը շենքերից, շինություններից, գործարաններից կամ սարքավորումներից, կամ նավերից տեղափոխելու աշխատանքների մեկնարկը:

2. 1-ին պարբերությունում նշված նախագծով պետք է նախատեսվեն այն միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման համար:

Նախագծում մասնավորապես պետք է նշվի, որ՝

ա) ասբեստը և (կամ) ասբեստ պարունակող արտադրանքը պետք է տեղափոխվի նախքան ապամոնտաժման տեխնիկայի կիրառումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է ավելի մեծ վտանգ լինել աշխատողների համար, քան եթե ասբեստը և (կամ) ասբեստ պարունակող արտադրանքը մնար իր տեղում.

բ) անհրաժեշտության դեպքում՝ տրամադրվում են 12-րդ հոդվածի առաջին ենթապարբերության (ա) կետում նշված անհատական պաշտպանիչ սարքեր.

գ) ապամոնտաժման կամ ասբեստի տեղափոխման աշխատանքների ավարտից հետո, աշխատավայրում ասբեստի ներգործության ռիսկի բացակայությունը պետք է հաստատվի՝ ազգային օրենքների և գործելակերպի համաձայն:

Իրավասու մարմինների պահանջով՝ նախագիծը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

ա) աշխատանքի բնույթը և հավանական տևողությունը.

բ) աշխատանքի իրականացման վայրը.

գ) կիրառվող մեթոդները, երբ աշխատանքն ընդգրկում է ասբեստի կամ ասբեստ պարունակող նյութերի կիրառում.

դ) սարքերի բնութագիրը, որոնք օգտագործվել են՝

ի) աշխատանքն իրականացնող անձանց պաշտպանության և թունազերծման համար.

ii) աշխատանքների իրականացման վայրում կամ մոտակայքում գտնվող այլ անձանց պաշտպանության համար:

3. Իրավասու մարմինների պահանջով՝ 1-ին պարբերությունում նշված նախագիծը պետք է ուղարկվի այդ մարմիններ՝ նախքան նախատեսված աշխատանքի մեկնարկը:

Հոդված 14

1. Գործատուները պետք է համապատասխան ուսուցում անցկացնեն բոլոր այն աշխատողների համար, ովքեր ենթարկվում են կամ կարող են ենթարկվել ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործության: Նման ուսուցումը պետք է անցկացվի պարբերաբար և աշխատողների համար անվճար լինի:

2. Ուսուցումը պետք է աշխատողների համար դյուրըմբռնելի լինի: Այն պետք է աշխատողներին հնարավորություն տա ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ռիսկերի կանխման և անվտանգության ապահովման առումով, մասնավորապես՝

ա) ասբեստի հատկանիշների և առողջության վրա դրա ազդեցության՝ ներառյալ ծխելու սիներգետիկ ազդեցությունը.

բ) հավանաբար ասբեստ պարունակող արտադրանքի կամ նյութերի տեսակների,.

գ) այն աշխատանքների, որոնք կարող են հանգեցնել ասբեստի ներգործության, ինչպես նաև նման ներգործությունը նվազագույնի հասցնելու նպատակով կանխիչ հսկողության կարևորության,

- դ) անվտանգ աշխատանքային գործելակերպի, հսկողության և պաշտպանիչ սարքերի,
 - ե) շնչառական սարքերի համապատասխան դերի, ընտրության, սահմանափակումների և պատշաճ օգտագործման,
 - զ) արտակարգ իրավիճակում կիրառվող ընթացակարգերի,
 - է) թունազերծման ընթացակարգերի,
 - ը) թափոնների հեռացման,
 - թ) բժշկական հսկողության պահանջների վերաբերյալ:
3. Ասբեստի տեղափոխմամբ զբաղվող աշխատողների ուսուցման գործնական ուղենիշները մշակվում են Համայնքի մակարդակով:

Հոդված 15

Նախքան ապամոնտաժման կամ ասբեստի տեղափոխման աշխատանքներն իրականացնելը՝ ընկերությունները պարտավոր են սույն ոլորտում իրենց կարողություններն ապացուցող տվյալներ ներկայացնել: Նման տվյալները ներկայացնելը կարգավորվում է ազգային օրենքներին և (կամ) գործելակերպին համապատասխան:

Հոդված 16

1. 3(1) հոդվածում նշված բոլոր աշխատանքների դեպքում և ելնելով 3(3) հոդվածից՝ համապատասխան միջոցներ են ձեռնարկվում՝ նախատեսելու համար.
- ա) վերոհիշյալ աշխատանքների իրականացման վայրերը, որոնք՝
 - i) հստակորեն սահմանագծված և նշված են նախազգուշական նշաններով.
 - ii) փակ են այլ աշխատողների համար՝ բացառությամբ այն աշխատողների, ովքեր իրենց աշխատանքի կամ պարտականությունների բերումով ստիպված են մուտք գործել նման վայրեր.
 - iii) ներառում են այնպիսի տարածքներ, որտեղ ծխելն արգելվում է.
 - բ) այն տարածքները, որտեղ աշխատողները կարող են սնվել առանց ասբեստի փոշուց թունավորվելու վտանգի:

գ) աշխատողներին տրամադրվում է համապատասխան աշխատանքային կամ պաշտպանիչ հանդերձանք. նմանատիպ աշխատանքային կամ պաշտպանիչ հանդերձանքը մնում է ձեռնարկությունում. այնուամենայնիվ, եթե ձեռնարկությունը չի կատարում դրա մաքրումը, այն կարող է լվացվել ձեռնարկությունից դուրս գտնվող հիմնարկներում, որոնք հագեցված են նման աշխատանքներ կատարելու համար: Այս պարագայում հանդերձանքը փոխադրվում է փակ կոնտեյներներով.

դ) աշխատանքային կամ պաշտպանիչ հանդերձանքի և առօրյա հագուստի համար տրամադրվում են առանձին պահարաններ.

ե) աշխատողներն ապահովվում են բավարար թվով, հարմար լվացարաններով և զուգարաններով, ինչպես նաև ցնցուղներով՝ այն դեպքում, երբ աշխատանքը ներառում է փոշու հետ շփում.

զ) պաշտպանիչ սարքերը տեղադրվում են հատուկ նախատեսված վայրում և ստուգվում ու մաքրվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո. համապատասխան միջոցներ են ձեռնարկվում՝ նախքան հաջորդ օգտագործումը վերանորոգելու կամ փոխարինելու թերություն ունեցող սարքերը:

2. 1-ին պարբերության համաձայն ձեռնարկված միջոցների ծախսերը չեն կատարվում աշխատողների հաշվին:

Հոդված 17

1. 3(1) հոդվածում նշված բոլոր աշխատանքների դեպքում, համապատասխան միջոցներ են ձեռնարկվում՝ ապահովելու համար, որ ձեռնարկությունում կամ հիմնարկում աշխատողները և նրանց ներկայացուցիչները ստանան բավարար տեղեկություններ.

ա) ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործության հետևանքով առողջությանը սպառնացող հավանական ռիսկեր,

բ) պարտադիր սահմանային թույլատրելի արժեքների առկայության և մթնոլորտի դիտանցման անհրաժեշտության,

գ) հիգիենայի պահանջների՝ ներառյալ ծխելուց ձեռնպահ մնալու անհրաժեշտությունը,

դ) պաշտպանիչ սարքեր օգտագործելու կամ հանդերձանք կրելու մասով ձեռնարկվող նախազգուշական միջոցների,

ե) ասբեստի ներգործությունը նվազեցնելու համար նախատեսված հատուկ նախազգուշական միջոցների վերաբերյալ:

2. Ի լրումն 1-ին պարբերությունում նշված միջոցների և ելնելով 3(3) հոդվածից, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում՝ ապահովելու համար, որ՝

ա) ձեռնարկությունում կամ հիմնարկում աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները կարողանան օգտվել օդում ասբեստի խտացման չափման արդյունքներից և նրանց բացատրություններ տրվեն այդ արդյունքների կարևորության վերաբերյալ.

բ) եթե արդյունքները գերազանցում են 8-րդ հոդվածում նշված թույլատրելի սահմանային արժեքը, ապա ձեռնարկության կամ հիմնարկի համապատասխան աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորինս շուտ տեղեկացնում են այդ փաստի և դրա պատճառների մասին, և ձեռնարկությունում կամ հիմնարկում աշխատողների ու (կամ) նրանց ներկայացուցիչների համար խորհրդատվություն են անցկացնում ձեռնարկվող միջոցների, իսկ արտակարգ իրավիճակներում՝ տեղեկացնում արդեն ձեռնարկված միջոցների մասին:

Հոդված 18

1. Ելնելով 3(3) հոդվածից՝ ձեռնարկվում են 2-5-րդ պարբերություններում նշված միջոցները:

2. Յուրաքանչյուր աշխատողի առողջական վիճակի ստուգում պետք է կատարվի՝ նախքան աշխատավայրում ասբեստից կամ ասբեստ պարունակող նյութերից առաջացող փոշու ներգործությանը ենթարկվելը:

Նման ստուգումը պետք է ընդգրկի կրծքավանդակի հատուկ զննում: 1-ին հավելվածում տրված են այն գործնական առաջարկությունները, որոնց անդամ պետությունները կարող են հետևել աշխատողների կլինիկական հսկողությունն իրականացնելու համար. այս առաջարկությունները պետք է համապատասխանեցվեն տեխնիկական առաջընթացին՝ համաձայն 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածում նշված ընթացակարգի:

Նոր ստուգում պետք է անցկացվի առնվազն 3 տարին մեկ անգամ՝ ասբեստի ներգործության ամբողջ ընթացքում:

Առաջին ենթապարբերությունում նշված ուրաքանչյուր աշխատողի համար գրանցվում և պահվում են անհատական առողջական տվյալներ՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

3. 2-րդ պարբերության երկրորդ ենթապարբերությունում նշված կլինիկական հսկողությունից ելնելով՝ աշխատողների բժշկական հսկողության համար պատասխանատու բժիշկը կամ մարմինը, ազգային օրենքների համաձայն, խորհուրդ է տալիս կիրառել այս կամ այն անհատական պաշտպանիչ կամ կանխիչ միջոցը կամ սահմանում է նմանատիպ միջոցների կիրառումը:

Նման միջոցները կարող են համապատասխան դեպքերում նախատեսել տվյալ աշխատողի՝ ասբեստի ներգործությանը ենթարկվելու լիակատար բացառում:

4. Աշխատողներին պետք է տրվեն տեղեկություններ և խորհուրդներ՝ առողջական վիճակի ցանկացած ստուգման վերաբերյալ, որը նրանք անցնում են ասբեստի ներգործությանը ենթարկվելուց հետո:

Աշխատողների բժշկական հսկողության համար պատասխանատու բժիշկը կամ մարմինը կարող է նշել, որ բժշկական հսկողությունը պետք է սահմանվի ասբեստի ներգործությանը ենթարկվելուց հետո այնքան ժամանակ, որքան բժիշկը կամ պատասխանատու մարմինն անհրաժեշտ է համարում տվյալ անձի առողջության պահպանման համար:

Նման շարունակական հսկողությունն իրականացվում է ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

5. Համապատասխան աշխատողը կամ գործատուն կարող է, ազգային օրենքներին համապատասխան, պահանջել 3-րդ պարբերությունում նշված ստուգման վերանայում:

Հոդված 19

1. Ելնելով 3(3) հոդվածից՝ ձեռնարկվում են 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում նշված միջոցները:

2. Գործատուն պետք է գրանցամատյանում գրանցի 3(1) հոդվածում նշված աշխատանքների կատարման համար պատասխանատու աշխատողներին՝ նշելով աշխատանքի բնույթը և տևողությունը, ինչպես նաև ներգործության այն տեսակը, որին նրանք ենթարկվել են: Բժիշկը և (կամ) բժշկական հսկողության համար պատասխանատու մարմինը տվյալ

գրանցամատյանից օգտվելու իրավունք ունեն: Յուրաքանչյուր աշխատող իրավունք ունի օգտվելու գրանցամատյանի այն տվյալներից, որոնք վերաբերում են անձամբ իրեն: Աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները կարող են օգտվել գրանցամատյանի անանուն, ընդհանուր տեղեկություններից:

3. 2-րդ պարբերությունում նշված գրանցամատյանը և 18(2) հոդվածի չորրորդ ենթապարբերությունում նշված բժշկական գրառումները ներգործության ավարտից հետո պահվում են առնվազն 40 տարի՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

4. 3-րդ պարբերությունում նշված փաստաթղթերը պետք է մատչելի լինեն պատասխանատու մարմնին, այն դեպքերում, երբ ձեռնարկությունը դադարեցրել է իր գործունեությունը՝ ազգային օրենքների և (կամ) գործելակերպի համաձայն:

Հոդված 20

Անդամ պետությունները նախատեսում են համապատասխան պատժամիջոցներ, որոնք կիրառվում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային օրենսդրության խախտման դեպքում: Նման պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ:

Հոդված 21

Անդամ պետությունները վարում են ասբեստի և մեզոթելիոմայի հայտնի տեսակների գրանցամատյան:

Հոդված 22

Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հանձնաժողով զեկույց են ներկայացնում սույն Հրահանգի գործնական կիրարկման վերաբերյալ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 17ա(1), (2) և (3) հոդվածում նշված մեկ ընդհանուր զեկույցի հատուկ գլխի տեսքով, որը հիմք է ծառայում Հանձնաժողովի կողմից այդ հրահանգի 17ա(4) հոդվածին համապատասխան կատարվող գնահատման համար:

Հոդված 23

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնեն ազգային իրավունքի դրույթներ, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 24

II հավելվածում նշված հրահանգներով փոփոխված՝ 83/477/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով II հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած Հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արված հղումներ և պետք է ընթերցվեն ըստ III հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

Հոդված 25

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 26

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2009 թվականի նոյեմբերի 30-ին: